Շրջակա միջավայրի նախարար

պարոն Հակոբ Սիմիդյանին

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
# ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

   Արամ Մեյմարյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

   Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**

   Քենիայի Հանրապետություն (քաղաք Նայրոբի)

   2023թ. հոկտեմբերի 18-ից 21-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի քարտուղարություն

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

   Մասնակցություն Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիայի Կողմերի համաժողովի տասնհինգերորդ հանդիպման (COP 15), Կենսաանվտանգության մասին Կարթագենյան արձանագրության 10-րդ հանդիպման (CP-MOP 10) և գենետիկական ռեսուրսների հասանելիության և դրանց օգտագործումից բխող օգուտների արդար և համաչափ բաշխման մասին Նագոյա արձանագրության կողմերի 4-րդ հանդիպման(NP-MOP 4) երկրորդ մասին

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

   Հանդիպումների ընթացում քննարկվել են 2022 թվականի դեկտեմբերին կայացած հանդիպման առաջին մասից մնացած ընթացակարգային հարցերը, ներառյալ բյուրոյի և օժանդակ մարմինների նախագահների ընտրությունները:

Հանդիպումների ժամանակ քննարկվել են հետևյալ թեմաները.

- Կունմինգ-Մոնրեալի գլոբալ կենսաբազմազանության շրջանակի (GBF) իրականացման նպաստում և առաջընթացի մոնիթորինգ,
- Կենսաբազմազանության և էկոհամակարգային ծառայությունների վերաբերյալ միջկառավարական գիտաքաղաքական հարթակի (IPBES) և IPCC-ի ու դրանց հետևանքների գնահատում Կոնվենցիայի շրջանակներում,
- Պաշտոնյաների ընտրություն,
- COP 15 CBD-ի երկրորդ մասի հաշվետվության հաստատում:

## 7. <u>ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐ</u>

Հանդիպումները մեկնարկել են Նայրոբիում, Քենիա, 2023 թվականի հոկտեմբերի 19-20-ը, որոնց մասնակցել են ավելի քան 700 պատվիրակներ, ներառյալ կառավարությունների, քաղաքացիական հասարակության և այլ շահագրգիռ խմբերի ներկայացուցիչներ:

Կոնվենցիայի և դրա Արձանագրությունների COP և COP-MOP-ների վերսկսված նիստում կայացել են ընտրություններ, որոնց ժամանակ Կառավարությունները առաջադրել և ընտրել են COP 15-ի բյուրոյի անդամներին, որոնք պաշտոնավարելու են Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի Կողմերի համաժողովի 15-րդ հանդիպման ավարտից մինչև Կոնֆերանսի տասնվեցերորդ հանդիպման ավարտը:

Կայացել է երեք գաղտնի քվեարկություն՝ ընտրելու COP փոխնախագահներին, CEE-ից և WEOG-ից և SBSTTA-ի նախագահին: Գաղտնի քվեարկության միջոցով Կողմերը, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի փոխնախագահներ են ընտրվել Թեոնա Կարչավային (Վրաստան) և Անժելա Լոզանին (Մոլդովա), Էրիկ Շաուլսի (Լյուքսեմբուրգ)՝ որպես WEOG-ի երկրորդ փոխնախագահ: Գաղտնի քվեարկությամբ SBSTTA-ի նախագահ է ընտրվել Սենկա Բարուդանովիչը (Բոսնիա և Հերցեգովինա):

## 8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Քննարկվել են COP 16-ը անցկացնելու վերաբերյալ հարցերը: Թուրքիան հրաժարվել է հյուրընկալել COP 16-ը՝ 2023 թվականի փետրվարին տեղի ունեցած երկրաշարժի հետևանքներով պայմանավորված: Քարտուղարությունը նախատեսում է խորհրդակցություններ անցկացնել Կողմերի հետ հաջորդ հանդիպման ամսաթվի և վայրի որոշման նպատակով:

Հանդիպման ժամանակ պատվիրակների կողմից ընդունվել են Նագոյայի արձանագրության հանդիպման զեկույցը (CBD/NP/MOP/4/L.1/Rev.2) և Կարթագենյան արձանագրության COP/MOP 10-ի հանդիպման հաշվետվությունը (CBD/CP/MOP/10/L.1/Rev.2):

CBD/COP/15/Part-II/L.1/Rev.2: COP 16 (CBD/COP/15/Part-II/L.1/Rev.2) հանդիպման հաշվետվությունը ընդունվել է աննշան փոփոխություններով:

07/11/2023

X

ՏԻԳՐԱՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Signed by: GABRIELYAN TIGRAN 2211780245

Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ

/Արամ Մեյմարյան

25.10.2023թ.